## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2020 թվականի № 18

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27 -Ի №6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի 2020 թվականի օգոստոսի 27-ի № 6 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
2. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի № 35 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի № 40-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
4. Խաչփարի համայնքապետարանի համար համայնքի 1-ին, 2-րդ, 9-րդ, 11-րդ, 20-րդ և 21-րդ փողոցների գազաֆիկացման շինարարական աշխատանքների թույլտվության տեղական տուրքի արտոնություն սահմանելու և տեղական տուրքի վճարումից ազատելու մասին
5. Խաչփարի համայնքապետարանի համար համայնքի ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգման ավարտված աշխատանքների շահագործման փաստագրման ձևակերպման տեղական վճարի արտոնություն սահմանելու և տեղական վճարի վճարումից ազատելու մասին

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0):

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2020 թվականի № 19

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով սեփականատերերի կողմից ներկայացված հայտերը՝ ավագանին որոշում է.

1. Քաղաքացի Իսկուհի Մանավյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0111-0037 ծածկագրով 0.2702 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով,
2. Քաղաքացի Դանիել Կարաքիշյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0113-0103 ծածկագրով 0.1 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն /չրանոց/ կառուցելու նպատակով,
3. Քաղաքացի Սուրեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0004-0007 ծածկագրով 0.137 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0.08 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:
4.Հայկ Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0113-0070 ծածկագրով 0.1511 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ անասնագոմ կառուցելու նպատակով:
5.Սետրակ Ֆարամազյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0011-0006 ծածկագրով 0.201 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0.1 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ (6) դեմ(0) ձեռնպահ(0):

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» օգոստոսի 2020 թվականի № 20

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի № 35 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով,34-րդ հոդվածի 4-րդ մասով, 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «2019 թվականի համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, համայնքապետարանի աշխատակազմի, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի «Ծիծեռնակ» մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և «Խաչփարի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» №35 որոշման №3 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված 3
Խաչփար համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 16-ի № 35 որոշման

### «ԽԱՉՓԱՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

1.Աշխատողների քանակը՝ 7

2.Աշխատողների հաստիքացուցակը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Ընտանեկան բժիշկ | 1 |
| Ընտանեկան բուժքույր | 1 |
| Ընտանեկան բուժքույր | 0.5 |
| Հաշվապահ | 1 |
| Օպերատոր | 1 |
| Կրտսեր բուժ. աշխատող | 1 |

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» օգոստոսի 2020 թվականի №21-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի № 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» № 40-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի՝
ա.4-րդ կետի «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի «1 410.0» թիվը փոխարինել « 1 710.0 » թվով,
բ. 14-րդ կետի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «8 386.2» թիվը փոխարինել «8 086.2» թվով:
2) 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի աղյուսակի՝
ա. «4264 տրանսպորտային նյութեր 800.0» տողից հետո լրացնել նոր տողով՝

| | | |
|---|---|---|
| 4266 | առողջապահական և լաբորատոր նյութեր | 300.0 |

բ. «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «8 386.2» թիվը փոխարինել «8 086.2» թվով:
3) 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի աղյուսակի՝
ա. «4241 մասնագիտական ծառայություններ 250.0» տողից հետո լրացնել նոր տողով՝

| | | |
|---|---|---|
| 4266 | առողջապահական և լաբորատոր նյութեր | 300.0 |

բ. «ընդամենը» տողի «1 410.0» թիվը փոխարինել «1 710.0» թվով:
4) «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «8 386.2» թիվը փոխարինել «8 086.2» թվով:
5) 7-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի՝
ա. «11 850.0» թիվը փոխարինել «14 113.0» թվով,
բ. «4 406.8» թիվը փոխարինել «2 143.8» թվով:
6) 7-րդ կետի 6-րդ ենթակետի աղյուսակի՝
ա. «13 820.0» թիվը փոխարինել «16 083.0» թվով,
բ. «8 050.8» թիվը փոխարինել «5 787.8» թվով:
7) 7-րդ կետի 7-րդ ենթակետի՝
ա. «13 820.0» թիվը փոխարինել «16 083.0» թվով,
բ. «8 050.8» թիվը փոխարինել «5 787.8» թվով:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » օգոստոսի 2020 թվականի № 22

## ԽԱՉՓԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ, 2-ՐԴ, 9-ՐԴ, 11-ՐԴ, 20-ՐԴ, 21-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Խաչփարի համայնքապետարանի համար սահմանել արտոնություն և ազատել համայնքի 1-ին, 2-րդ, 9-րդ, 11-րդ, 20-րդ և 21-րդ փողոցների գազաֆիկացման շինարարական աշխատանքների թույլտվության տեղական տուրքի վճարումից:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 27 » օգոստոսի 2020 թվականի № 23

## ԽԱՉՓԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Խաչփարի համայնքապետարանի համար սահմանել արտոնություն և ազատել համայնքի ոռոգման ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքների շահագործման փաստագրման ձևակերպման տեղական վճարի վճարումից:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ